ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Տարոն Սաքոյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016)

Հիմնաբառեր. Ռուսաստան, Թուրքիա, Հարավային Կովկաս, ուժային հավասարակշռություն, սիրիական ճգնաժամ, ուկրաինական ճգնաժամ, ԵԱՏՄ, գործոն, Հայաստան, Ադրբեջան, ղարաբաղյան կոնֆլիկտ:

Հոդվածի նպատակը Հարավային Կովկասում Ռուսաստանի և Թուրքիայի շահերի ու հակասությունների վերլուծությունն է, որոնք հիմնականում սրվեցին սիրիական և ուկրաինական ճգնաժամերի ազդեցության տակ: Այդպիսի պայմաններում Ադրբեջանն առանցքային գործիք դարձավ Անկարայի համար, ինչը թույլ տվեց վերջինիս աստիճանաբար առաջ մղել իր շահերը տարածաշրջանում: Միաժամանակ Հայաստանի մասնակցությամբ ԵԱՏՄ ձևավորումը (նրա կողմից առանց որևէ նախապայմանի) բացասաբար անդրադարձավ նրա գործոնի վրա առաջին հերթին դաշնակից Մոսկվայի հետ հարաբերություններում: Իսկ Մոսկվայի նկատմամբ Արևմուտքի քաղաքական և տնտեսական պատժամիջոցների համապատկերում Թուրքիան ու Ադրբեջանը, ի հեռուկս Հայաստանի շահերի, զգալիորեն ամրապնդեցին իրենց աշխարհաքաղաքական գործոնները Ռուսաստանի հետ հարաբերություններում:

21-րդ դարի երկրորդ տասնամյակում Հարավային Կովկասը զերծ չմնաց բախումներից: Տարածաշրջանը՝ նաև որպես հետխորհրդային տարածքի մաս, զգայուն եղավ տեղի աշխարհաքաղաքական իրադարձությունների նկատմամբ: Հարավային Կովկասը երկուստեք ցավոտ տարածաշրջան է, որտեղ ռուս-թուրքական շահերն ու բախումները միշտ էլ սուր են եղել: Աշխարհաքաղաքական իրողությունները, որոնց պայմաններում տարածաշրջանում արտահայտվեցին ռուս-թուրքական հակասություն-ները, պայմանավորված էին նաև սիրիական և ուկրաինական ճգնաժամերով, որոնցից ևս կողմերն անմասն չէին մնացել: Ուստի ճշմարիտ է տեսակետը, որ դարասկզբում քառսային վիճակի հաստատումը Մերձավոր Արևելքում հայության և Հայաստանի վրա կարող է «խիստ բացասաբար» անդրադառնալ[1]:

21-րդ դարի երկրորդ տասնամյակ Թուրքիան մուտք գործեց Ադրբեջանի հետ իրավապայմանագրային հիմքով հաստատված դաշինքով[2]: Այդ համաձայնագիրը դարձավ Ադրբեջանում Թուրքիայի քաղաքականության ճանապարհային քարտեզի գլխավոր բաղադրիչը[3], ինչն էական նշանակություն ունեցավ Հարավային Կովկասում ռազմա-քաղաքական բալանսի համատեքստում: Ադրբեջանն իր անվտանգային խնդիրների լուծումը կապում էր Թուրքիայի հետ, որով տարածաշրջանում Ռուսաստանի ներկայությո ունը սկսել էր կաշկանդել նրան[4]: Այս տեսակետը հաստատում է ադրբեջանցի քաղաքագետ Ռ. Միրկադիրովի այն համոզմունքը, որ Ռուսաստանը չունի քաղաքական և տնտեսական անհրաժեշտ ռեսուրսներ՝ Հարավային Կովկասը սեփական ազդեցության տակ պահելու համար, ուստի պետք է «ազատ նավարկության» թողնի տարածաշրջանի պետու-

* Հոդվածը ներկայացվել է 28.07.2021 թ., գրախոսվել՝ 21.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Տե՛ս Հովհաննիսյան Ն., Գևորգյան Գ., «Արաբական գարուն». համաարաբական ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման, Ե., 2018, էջ 43-45:

[2] 2010 թ. օգոստոսի 16-ին ստորագրվեց «Թուրքիայի և Ադրբեջանի միջև ռազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագիրը: Տե՛ս Обнародован текст военного соглашения между Азербайджаном и Турцией, 2010г., https://regnum.ru/news/polit/1359151.html (դիտումը՝ 13.05.2021 թ.):

[3] Տե՛ս Kasapoglu C., Veiled Counter-Balancing: The Peacekeeping ‘Arrangement’ Between Turkey and Russia in Karabakh, Eurasia Daily Monitor Volume: 17 Issue: 181, 18.12.2020, https://jamestown.org/program/veiled-counter-balancing-the-peacekeeping-arrangement-between-turkey-and-russia-in-karabakh/ (դիտումը՝ 25.05.2021 թ.):

[4] ՀՀ ԱԳՆ ՊԴ բաժին, g. 20, գ. 99, թ. 29:

թյուններին՝ նրանց հետ հարաբերությունները կառուցելով այլ ձևաչափով [1]: «Ազատ նավարկություն» ասելով՝ Միրկադիրովը, թերևս, նկատի ուներ այն պայմանները, որոնք կարող էին նպաստել Հայաստանի և Արցախի դեմ թուրք-ադրբեջանական ագրեսիային:

Վրաստանի հարցում ռուս-թուրքական մրցակցությունը էապես կրճատվեց հատկապես օգոստոսյան պատերազմից հետո, երբ Թբիլիսին ամբողջությամբ սկսեց կողմնորոշվել դեպի Արևմուտք և Թուրքիա: Վրաստանի արտաքին քաղաքական կողմնորոշմամբ տարածաշրջանում Մոսկվայի դիրքերը թուլացան: Դրանից փորձեց օգտվել Թուրքիան՝ ձգտելով ընդլայնել իր ազդեցությունն այդ երկրում, որի արդյունավետությանը նպաստեցին Վրաստանի պատրաստակամությունն ու այնտեղ թուրքամետ տրամադրությունների առկայությունը: 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո Թուրքիայի և Ռուսաստանի դիրքերը Հարավային Կովկասում արտահայտվեցին տարբեր կերպ: Ռուսաստանն ամրապնդվեց Աբխազիայում և Հվ. Օսիայում, իսկ Թուրքիան սկսեց աջակցել Վրաստանին նրա՝ դեպի Արևմուտք կողմնորոշման հարցում: Մ. Սաակաշվիլու հակառուսական դիրքորոշումն ու թուրքամետ քաղաքականությունը հանգեցրին նրան, որ Վրաստանը հայտնվեց քաղաքական, տնտեսական և էներգետիկ կախվածության մեջ Թուրքիայից և Ադրբեջանից [2]: Իսկ վերջինս Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմավարական եռանկյունին փորձում էր ծառայեցնել իր հակահայ նպատակներին: Ինչպես նկատում է Է. Դավթյանը, «Ադրբեջանը հաճախ է եռակողմ ձևաչափն օգտագործում որպես լծակ ընդդեմ Հայաստանի՝ փորձելով ներկայացնել դա որպես ղարաբաղյան խնդրում Ադրբեջանի հետ Թուրքիայի և Վրաստանի կողմից «համերաշխության դրսևորում»: 2015 թ. ապրիլին Թբիլիսիում ԱՀ պաշտպանության նախարար Զ. Հասանովն իր վրաց և թուրք գործընկերների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը տարածքային հավակնություններ ունի Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նկատմամբ, ինչն արվում էր նրանց աջակցությունը ստանալու նպատակով: Հարևանների նկատմամբ Հայաստանի «տարածքային հավակնությունների մասին» թեզիսը Ադրբեջանը պարբերաբար տարածում է»[3]: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա վերջինս ղարաբաղյան հարցում միջազգային տարբեր հարթակներում սատարում է թուրք-ադրբեջանական դիրքորոշմանը[4]:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան հարցով ռուս-թուրքական շփումներին, պետք է արձանագրենք, որ Թուրքիան փորձում էր ռուս-թուրքական օրակարգով հասնել խնդրի ադրբեջանանպաստ լուծմանը: Այլ կերպ ասած՝ Թուրքիան, գիտակցելով այդ հարցում Ռուսաստանի լուրջ լծակները, ցանկանում էր վերջինիս համոզել հայկական կողմի վրա ճնշումներ բանեցնել՝ հասնելով խնդրի համապատասխան ելքով լուծմանը: Տարբեր առիթներով պաշտոնական Անկարան նշում էր, որ թուրքական կողմն ընդունում է Հարավային Կովկասում Ռուսաստանի անվիճելի ազդեցությունն ու լծակները, ուստի ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանալին գտնվում է Մոսկվայում: Այս մոտեցումը դարձավ ռուս-թուրքական քաղաքական շփումների օրակարգային կարևոր հարցերից մեկը, որտեղ Անկարան շեշտադրում էր Ռուսաստանի կամքից այդ խնդրի կարգավորման կախված լինելը: 2013 թ. նոյեմբերին՝ Սանկտ Պետերբուրգում նախագահ Վ. Պուտինի հետ հանդիպման ժամանակ, ԹՀ վարչապետ Ռ. Էրդողանը հայտարարեց, որ, ի թիվս տարածաշրջանային այլ հարցերի, քննարկվել է նաև ղարաբաղյան հիմնախնդիրը: Վերջինս նաև հավելեց, որ Թուրքիան ու Ռուսաստանն այդ հարցերում ունեն պատասխանատվություն, և նման քննարկումները տարածաշրջանային խնդիրների կարգավորման հարթակ են ստեղծում[5]: Խնդրի շուրջ Թուրքիայի դիրքորոշումը շարունակեց տեղ գտնել նաև հետագա տարիներին: 2017 թ. նոյեմբերին Ռ. Էրդողանը Բաքվում հայտարարեց. «Իմ նախորդ այցի ժամանակ քննարկել ենք Լեռնային Ղարաբաղի հարցը: Դրա հետ կապված՝ հարգելի Պուտինը հաստատեց այդ հարցում ամեն ինչ անելու փաստը: Գործընթացն արդեն 30 տարի է ձգվում է և

---

[1] Տե՛ս Миркадыров Р., Азербайджан-2010 // КАВКАЗ-2010, Е., 2012, с. 25:

[2] Տե՛ս Алексанян Л. М., Эволюция турецко-грузинских отношений: новые тенденции (экономический и военно-политический факторы) // Проблемы постсоветского пространства, 2017, 4 (2), с. 152-153, տե՛ս նաև Կարապետյան Ռ., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ ընդլայնվող համագործակցությունը // «21-ՐԴ ԴԱՐ», Թիվ 2 (72), 2017, էջ 12-13:

[3] Давтян Э., Трехстороннее военное сотрудничество Турции, Грузии и Азербайджана (ноябрь 2012 г. – май 2016 г.) // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Ե., 2016, № 3 (21), էջ 42:

[4] Տե՛ս Алексанян Л. М., там же, с. 153:

[5] Путин и Эрдоган обсудили Сирию, Ирак и Карабах, 22.11.2013, https://reg-num.ru/news/polit/1736060.html (դիտումը՝ 20.08.2020 թ.).

տարածաշրջանում դրա լուծող ուժը Ռուսաստանն է»[1]: Սիրիական թատերաբեմում հատկապես 2017 թվականից ռուս-թուրքական հարաբերություններում համագործակցային մեխանիզմների նաև Հարավային Կովկասում կիրառման ձգտումը դարձել էր Անկարայի քաղաքական օրակարգի կարևոր բաղադրիչներից:

Վերադառնալով Վրաստանի թեմային՝ պետք է նշենք, որ 2012 թ. իշխանության եկած «Վրացական երազանք» կուսակցությունը, թեև որոշակի վերապահումներ էր հայտնում Վրաստանում թուրքական ազդեցության կապակցությամբ, այդուհանդերձ ևս շարունակեց խորացնել թուրք-վրացական հարաբերությունները, իսկ ռուս-վրացական հարաբերությունների խզումը շարունակվեց, չնայած իրավիճակը հավասարակշռելու համար այդ քաղաքական ուժը նախկինում հանդես էր եկել Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման օգտին[2]: Թբիլիսիի նկատմամբ թուրքական էքսպանսիան և դրա ծավալների հետագա ընդլայնումը, ի վերջո, պետք է սպառնային Վրաստանի ազգային անվտանգությանը, ինչի մասին 2019 թ. օգոստոսին ահազանգեց երկրի վարչապետ Մ. Բախտաձեն[3]:

Իրավիճակը ենթադրում էր Հայաստանի նշանակության աստիճանի փոփոխություն Թուրքիայի և Ռուսաստանի համար, որը, ըստ էության, Ռուսաստանի միակ ազդեցության գոտին էր Հարավային Կովկասում: Հաշվի առնելով, որ Անկարան չէր հրաժարվել հակառուսական և հակահայկական ընթացիկ ու հեռանկարային ծրագրերից, այդ շրջանում սպասելի էին Հայաստանի և տարածաշրջանում ռուսական ազդեցության դեմ Թուրքիայից բխող սադրանքները: Ռիսկերի հավանականությունը կմեծանար հատկապես ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման պարագայում, իսկ Ադրբեջանը կդառնար գործիք Հայաստանի ու ԼՂՀ-ի դեմ:

Այսպիսին էր Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական պատկերը մերձավորարևելյան և հետխորհրդային տարածաշրջաններում աշխարհաքաղաքական ցնցումների նախօրյակին:

Ռուս-թուրքական գործընկերությունը 2000-ական թթ. կրում էր պաշպանողական բնույթ, ինչը պայմանավորված էր Ռուսաստան-Արևմուտք և Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների վատթարացմամբ: Ուստի Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում որոշիչ էր Արևմուտքի նկատմամբ կողմերի վերաբերմունքը. կողմերին մտերմացրել էր Արևմուտքից մերժված լինելը[4]: Թուրք քաղաքագետ Դ. Ն. Գյոքսելը իրավացիորեն նկատել է, որ «ռուս-թուրքական հարաբերությունները Հարավային Կովկասում կշարունակեն ծավալվել Արևմուտք-Ռուսաստան և Արևմուտք-Թուրքիա հարաբերությունների հիման վրա, սակայն այս իրավիճակը Ռուսաստանի և Թուրքիայի միջև կարող է չգործել առավել լայն թատերաբեմում, ինչպես, օրինակ, Սիրիայում»[5]:

2010-2011 թթ. սկսված «Արաբական գարունը» պետք է անդրադառնար նաև Հարավային Կովկասի վրա, ինչն առաջին հերթին պայմանավորված էր Սիրիայի հարցում ռուս-թուրքական հակասությունների հետ, որոնց էլ հետագայում գումարվեց ուկրաինական ճգնաժամը: Եթե մինչ «Արաբական գարունը» Եվրասիայում ռուս-թուրքական կողմերին միավորող գլխավոր գործոնը ամերիկյանն էր, ապա հիշյալ իրադարձությունները փոխեցին նրանց հարաբերություններում ձևավորած հրամայականները: 2014 թ. Ռուսաստանին Ղրիմի միացմամբ Արևմուտքը Մոսկվայի նկատմամբ սկսեց կիրառել տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ: 2014 թ. ապրիլի 1-ին ՆԱՏՕ-ն դադարեցրեց Մոսկվայի հետ համագործակցությունը՝ սառեցնելով թե՛ ռազմական, թե՛ քաղաքական հարաբերությունները: Ի պատասխան՝ նույն թվականի դեկտեմբերին Մոսկվան հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի ուժերը և նրա անդամ երկրների՝ Ռուսաստանի սահմանների մոտակայքում գտնվող ռազմական ենթակառուցվածքները երկրի համար արտաքին վտանգ են ներկա-

[1] Erdoğan'dan 'Dağlık Karabağ' açıklaması, 22.11.2017, https://www.yenicaggazetesi.com.tr/erdogandan-daglik-karabag-aciklamasi-177830h.htm (դիտումը՝ 20.08.2020 թ.):

[2] Տե՛ս Алексанян Л. М., там же, с. 153:

[3] Տե՛ս Турецкая экспансия в Грузии: исламизация не за горами, 04.10.2019, https://www.golosarmenii.am/article/88658/tureckaya-ekspansiya-v-gruzii-islamizaciya-ne-za-gorami?fbclid=IwAR2da1i4iJo2IgUnk1Y6L-4xWygwvV8yg5fzSmdyX-OLac82mz9XAlsfMTw (դիտումը՝ 09.10.2019 թ.):

[4] Տե՛ս Warhola James W., Bezci Egemen B., The Return of President Putin and Russian-Turkish Relations: Where Are They Headed?, SAGE Open, July-September 2013, pp. 3-4:

[5] Goksel D. N., The dynamics of the Ankara-Moscow partnership in relation to the South Caucasus, published by the Strategic Research Center, August, 2012, p. 10.

յացնում[1]: Մինչ այդ՝ հունիսին, ՌԴ-ն հեռացվել էր G8-ից, ինչը լուրջ հարված էր Ռուսաստանի միջազգային դիրքերին: Միջազգային իրադրության նման սրացումը չէր կարող չանդրադառնալ նաև ռուս-թուրքական հարաբերությունների վրա, մանավանդ որ դրանք արդեն իսկ շեղվել էին իրենց բնականոն ընթացքից: ՌԴ նկատմամբ տնտեսական և քաղաքական պատժամիջոցների սահմանումն ու դրանց հետագա ընդլայնումը, ի վերջո, կարող էին հանգեցնել նրա արտաքին քաղաքական սկզբունքների վերագնահատմանն ու փոխակերպմանը, մասնավորապես դրանցում ֆինանսատնտե-սական տարրի կարևորմանը:

2015 թ. աշնան ընթացքում սիրիական հիմնահարցի շուրջ ծավալվող ռուս-թուրքական հակասությունների արդյունքում նոյեմբերին խոցվեց ռուսական կործանիչը: Սրան ի պատասխան՝ հետևեցին Ռուսաստանի համալիր պատժամիջոցները Թուրքիայի նկատմամբ, որոնք ծանր տնտեսական հետևանքներ ունեցան վերջինիս համար: Աշխարհաքաղաքական առումով նույնպես Ռուսաստանն առանցքային նշանակություն ուներ Թուրքիայի համար: Նրա հետ սերտ հարաբերություններով Թուրքիան անհրաժեշտության դեպքում որպես լուրջ հակակշիռ ու, այսպես ասած, այլընտրանք էր դիրքավորվում ԱՄՆ-ի հետ իր հարաբերություններում, ինչը, որպես կանոն, սթափեցնում էր վերջինիս՝ Թուրքիային տալով շոշափելի առավելություններ: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ն ռուս-թուրքական ռազմավարական գործընկերության մեջ միշտ էլ իր ազգային շահերի համար վտանգ է տեսել: Մինչդեռ Ռուսաստանի հետ հարաբերությունների խզումը Թուրքիային դարձնում էր կանխատեսելի ԱՄՆ-ի համար, ինչն արդեն իսկ Անկարային դարձնում էր խոցելի: Այս ամենով պայմանավորված ռիսկերը չէին կարող չանհանգստացնել թուրքական դիվանագիտությանը, որը որոշ գործողություններով փորձեց գրավել Մոսկվայի ուշադրությունը՝ ձգտելով ցույց տալ վերջինիս, որ ռուս-թուրքական գործընկերությունը կարևոր է նաև Ռուսաստանի համար:

Արդյունքում Հարավային Կովկասում Թուրքիան գործի դրեց իր դաշնակից Ադրբեջանին: Ռուսաստանին ձեռնտու չէր առկա պայմաններում (Սիրիա, Ուկրաինա) ևս մեկ խնդրի ծագումը կամ թեժացումը: Մինչդեռ Թուրքիան 2015 թ. նոյեմբերին ծագած ռուս-թուրքական ճգնաժամից հետո պատրաստվում էր գործել Ռուսաստանի դեմ՝ օգտագործելով ղարաբաղյան հիմնախնդիրը: Թուրքական սադրանքները համընկնում էին Ադրբեջանի ռազմատենչ նկրտումների հետ: Ի. Ալիևն անհանգստացած էր Ուկրաինայում սկսված հեղափոխական և անջատամետ գործընթացներով (*Վ. Յանուկովիչի տապալումն ու փախուստը ՌԴ, Ղրիմի անկախացումը, ապա՝ միացումը ՌԴ-ին, Դոնեցկի և Լուգանսկի ինքնահռչակ հանրապետությունների ձևավորումն ու դրանց դեմ Կիևի ռազմական գործողությունները*), քանի որ դրանք, նրա կարծիքով, կարող էին շեղել ուշադրությունը ղարաբաղյան խնդրից: Բացի դրանից՝ Լեռնային Ղարաբաղի սուբյեկտայնության երկարատև փաստը աստիճանաբար կարող էր հանգեցնել նրա նաև դե յուրե կայացմանը, ինչը հասկանում էին նաև Բաքվում: Ուստի միջազգային հանրության ուշադրությունը սևեռելու նպատակով Ադրբեջանը պատրաստում էր հերթական ագրեսիան Լեռնային Ղարաբաղի դեմ, ինչի համար նա վերջին շրջանում սկսել էր զգալիորեն համալրել իր զինանոցը[2]: Ադրբեջանի հակահայ հռետորաբանությունն ուներ նաև ներքաղաքական և ներտնտեսական պատճառներ, քանի որ 2014 թվականից համաշխարհային շուկայում նավթի գնանկումը հարվածում էր Ադրբեջանի տնտեսությանն ու Ի. Ալիևի քաղաքական վարկանիշին, ուստի վերջինս նաև սեփական հանրությանը ներքին խնդիրներից շեղելու անհրաժեշտություն ուներ: Այսպիսի պայմաններում գրանցվեց 2015 թ. ռուս-թուրքական հերթական ճգնաժամը, որը հարմար առիթ էր Ալիևի համար Արցախի դեմ իրավիճակը սրելու կապակցությամբ: Այդ ճգնաժամի պայմաններում հաճախակի դարձան թուրք բարձրաստիճան պաշտոնյաների այցելություններն Ադրբեջան: 2015 թ. դեկտեմբերին Բաքու այցելեց վարչապետ Ա. Դավութօղլուն, որտեղ նա ընդգծեց, որ Ադրբեջանի հետ երկխոսությունը շատ կարևոր է հատկապես Ռուսաստանի հետ հարաբերությունների սրացման համապատկերում[3]: Ուշագրավ է, որ Դավութօղլուն Ադրբեջանի հետ Թուրքիայի

---

[1] Տե՛ս Մկրտչյան Ջ., Ռուսաստան-ՆԱՏՕ. դաշնակիցներից մինչև հակառակորդներ, 25.06.2020, https://orbeli.am/hy/post/482/2020-06-25/Ռուսաստան-ՆԱՏՕ.+դաշնակիցներից+մինչև++հակառակորդներ (դիտումը՝ 12.07.2020 թ.):

[2] Տե՛ս Ежегодник СИПРИ 2011: вооружения, разоружение и международная безопасность, М., ИМЭМО РАН, 1998-2011, 2012, с. 223:

[3] Տե՛ս Курбани Г., Давутоглу А.: История Кавказа и Азии не может быть написана без участия Турции, 04.12.2015, https://www.aa.com.tr/ru/турция/ахмет-давутоглу-история-кавказа-и-азии-не-может-быть-написана-без-участия турции/485521?fbclid=IwAR2RWm5QhmgVzUDZmH66QK3_9AQ2tlrMTFDwVpK4_TDEnaBtbiAjDAKSDzs

երկխոսությունը կապում էր թուրք-ռուսական հարաբերությունների սրացման հետ, ինչը հայ-ռուսական կողմի համար պետք է ահազանգ լիներ: Արդյունքում 2015 թ. դեկտեմբերի 23-ին Մոսկվայում ստորագրվեց «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագիրը»[1]: 2016 թ. փետրվարին Թուրքիայի ԱԳ նախարար Մ. Չավուշօղլուն այցելեց Ադրբեջան, որտեղ, ի թիվս այլ թեմաների, նախատեսվում էր քննարկել նաև ղարաբաղյան խնդիրը[2]: Իսկ փետրվարի 19-ին վերջինս Թբիլիսիում հայտարարեց, որ Աբխազիան և Հարավային Օսիան Վրաստանի, իսկ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածքներ են[3]:

Ռուս-թուրքական ճգնաժամի ֆոնին թուրք-ադրբեջանական շփումների հաճախակի բնույթն ու դրանց ընթացքում ղարաբաղյան խնդրի արծարծումը սպասելի պետք է դարձնեին հարձակումն Արցախի վրա: Ստեղծված պայմաններում Թուրքիան կարող էր օգտվել 2010 թ. պայմանագրով իր ստանձնած պարտավորություններից: Այս համատեքստում ուշագրավ է 2016 թ. մարտին Դ. Ալբորովայի մոտեցումը, որ 2008 թվականի պատերազմը Հվ. Օսիայում, այնուհետև դրան հաջորդած ՌԴ-ի կողմից նրա և Աբխազիայի անկախության ճանաչումը, արաբական գարունը, իրանական հարցը, Լիբիան, «Իսլամական պետությունը», սիրիական պատերազմը, ռուս-թուրքական հարաբերությունների սրացումը, Պարսից ծոցի երկրներում ճգնաժամը Հարավային Կովկասի անվտանգության դեմ մարտահրավերներ են[4]: Մեկ այլ քաղաքագետ Վ. Կարասևի կանխատեսումների համաձայն՝ Թուրքիան սրելու և բորբոքելու է Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ու Հայաստանի միջև գոյություն հակամարտությունը[5]:

Ս. Մարկեդոնովը, իր հերթին, նշել է, որ «սիրիական բեկումը» թարմություն մտցրեց ռուս-թուրքական առճակատումներում՝ ստեղծելով ռիսկային խնդիրներ ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև դրանից դուրս: Վերջինս նաև արձանագրել է, որ կովկասյան աշխարհաքաղաքականության գոյությունը վակումային չէ և Մերձավոր Արևելքում ուժերի հարաբերակցության ցանկացած փոփոխությունը նաև Անդրկովկասում տարբեր խաղացողների մոտ կարող է ձևավորել պատրանք՝ հեշտությամբ, հօգուտ իրենց, ստատուս քվոյի հնարավոր փոփոխության հարցում[6]: Հենց դա էլ փորձեց անել Ադրբեջանը 2016 թ. ապրիլին:

Ռուս վերլուծաբան Վ. Միխայլովը նշել է, որ Ադրբեջանն աստիճանաբար ավելի շատ է հենվում Թուրքիայի աջակցության վրա, որի ուշադրությունը Ղարաբաղի նկատմամբ ավանդաբար դառնում է առավել ուշադիր Մերձավոր Արևելքում Ռուսաստանի հետ յուրաքանչյուր առճակատման փուլում: …Ապրիլյան պատերազմը դարձավ 2015 թ. նոյեմբերին տեղի ունեցած ռուս-թուրքական առճակատման անդրկովկասյան յուրատեսակ շարունակությունը[7]:

Մերձավոր Արևելքում ծավալվող իրադարձությունները շոշափում էին Ռուսաստանի և Թուրքիայի շահերը, որի արդյունքում պետք է գործեին նրանց միջև օրինաչափություն դարձած պատմական հակասությունները՝ ավանդաբար դրսևորվելով նաև Հարավային Կովկասում: Այս առումով Թուրքիային գործելու առիթ էր հարկավոր:

(դիտումը՝ 14.01.2020թ.). См. также: Визит Давутоглу в Баку: к кому склоняется Азербайджан в напряженности между Турцией и Россией, 19.12.2015, https://flnka.ru/aktualnoe/11648-vizit-davutoglu-v-baku.html (դիտումը՝ 14.01.2020 թ.):

[1] Տե՛ս Համաձայնագիր, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115436 (դիտումը՝ 20.01.2021թ.):

[2] Տե՛ս Теракты не дают президенту Турции посетить Баку, 15.03.2016, https://eadaily.com/ru/news/2016/03/15/terakty-ne-dayut-prezidentu-turcii-posetit-baku-aliev-sam-poedet-k-erdoganu?fbclid=IwAR2TV0faoFPA5pZuywUYUoUn91S6dYOgqy2g_8fSw6LdBFa-DrtahIthXfI (դիտումը՝ 14.01.2020 թ.):

[3] Տե՛ս Կարապետյան Ռ., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան…, էջ 12:

[4] Алборова Д., Обострение российско-турецких отношений – новый вызов для безопасности на Южном Кавказе, март 2016 г., http://theanalyticon.com/?p=7660&lang=ru (դիտումը՝ 20.01.2020 թ.).

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] Տե՛ս Маркедонов С. М., Российско-турецкая конфронтация: кавказское измерение, 20.02.2016, https://m.ru.armeniasputnik.am/world/20160220/2039757.html?fbclid=IwAR1ZaiZms_JgD8XG7tZGmHaiAzbikunX3PKM4Xlvl8clsf9CjFIm_G-9mAE (դիտումը՝ 03.02.2020թ.):

[7] Տե՛ս Михайлов В., От Идлиба до Карабаха: Турция вновь зажжет фитиль войны на Карабахе, 16.02.2020, https://eadaily.com/ru/news/2020/02/16/ot-idliba-do-karabaha-turciya-vnov-zazhzhyot-fitil-voyny-na-kavkaze (դիտումը՝ 22.07.2021թ.).

Ռուս-թուրքական ճգնաժամին նախորդած ժամանակահատվածում տեղի ունեցան որոշ նշանակալի իրադարձություններ: 2013 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց Մաքսային միությանը միանալու, այդ նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը մասնակցելու Հայաստանի որոշման մասին [1]: Կարևորելով ՀՀ-ի՝ ՌԴ գլխավորած եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին մասնակցելը՝ միաժամանակ պետք է նշենք, որ Մոսկվայի համար այդ առանցքային խնդրի նկատմամբ Երևանի պատրաստակամ և դրա դիմաց ոչինչ չակնկալող դիրքորոշումը բացասաբար անդրադարձավ վերջինիս գործոնի վրա: Արդեն 2015 թ. հունվարին ձևավորվեց Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ): Սույն փաստը տհաճ իրողություն էր Արևմուտքի [2] և ծավալապաշտությունը որպես արտաքին քաղաքական հայեցակարգ հռչակած Անկարայի համար[3]: Եվրասիական ինտեգրացիոն գործընթացները սահմանափակում էին արևելքով պայմանավորված Անկարայի նպատակները: Ակնհայտ է, որ իր հավակնությունների իրագործման համար Թուրքիան ձգտելու էր օգտագործել Արևմտյան դաշնակիցների ներուժը: Սակայն Հայաստանի անդամակցությունը հիշյալ Միությանը բնավ չէր ենթադրում վերջինիս հրաժարումը Արևմուտքի հետ համագործակցությունից: Ս. Սարգսյանի որդեգրած «և՛…և՛»-ի քաղաքականությունը [4] հիասթափություն եղավ Ռուսաստանի համար, քանի որ ՀՀ-ն չհրաժարվեց Արևմուտքից: Այնուամենայնիվ, Արևմուտքը չէր կարող Հայաստանի համար դառնալ Ռուսաստանին հակակշռող համարժեք բևեռ, ինչը, հանձին Թուրքիայի, ուներ Ադրբեջանը: Սա որոշիչ էր իրենց աշխարհաքաղաքական գործոնների ամրապնդման ուղղությամբ Մոսկվայի առջև ծավալվող հայ-ադրբեջանական մրցակցությունում:

Ադրբեջանի՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսանալը ռիսկային հանգամանք էր Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի համար, քանի որ ստեղծված պայմաններում Բաքուն Մոսկվայի հետ սակարկելու հնարավորություն ստացավ: Մասնավորապես, Ադրբեջանին ևս ԵԱՏՄ «բերելու» անհրաժեշտությունը չէր բացառում, որ ՌԴ-ն փորձելու էր դա անել ղարաբաղյան խնդրի շուրջ նրան սիրաշահման եղանակով: Իսկ դա նշանակում էր, որ պետք է սպասելի լիներ խնդրի հանդեպ Ռուսաստանի դիրքորոշման փոխակերպումը: Արդյունքում արդեն 2015 թվականից Մոսկվան հասկացնել է տալիս՝ ստատուս քվոն այլևս հանդուրժելի չէ[5]: Իրադրությունը դասավորվում էր ի վնաս Հայաստանի և ԼՂ խնդրում առկա ստատուս քվոյի: Բացի դրանից՝ ԵԱՏՄ ձևավորումը Երևանին չազատեց Ադրբեջանի և Թուրքիայի ագրեսիվ հռետորաբանությունից: Ավելին, ստացվում էր, որ ՌԴ-ն նույնպես սկսեց հանդես գալ ընդդեմ ստատուս քվոյի: Սակայն ի տարբերություն Թուրքիայի ու Ադրբեջանի՝ Ռուսաստանն ի սկզբանե (2013 թ.) ձգտում էր խնդրի խաղաղ և բանակցային եղանակով կարգավորման[6]: Այնուհանդերձ, ռուսական առաջարկների շնորհիվ Բաքուն քիչ թե շատ ընդունելի այլընտրանք ստացավ: Մինչև 2015 թ. նոյեմբերին ռուս-թուրքական ճգնաժամի ծագումը Ռուսաստանն արդեն իսկ դեմ էր գոյություն ունեցող ղարաբաղյան ստատուս քվոյին: Սակայն այդ խնդրի նկատմամբ ռուսական դիրքորոշման փոփոխությունը, թերևս, ուներ նաև տնտեսական շարժառիթներ: Թուրքիան և Ադրբեջանը Մոսկվայի համար տնտեսական խոշոր գործընկերներ էին, իսկ աշխարհատնտեսական տարրը Ռուսաստանի արտաքին

---

[1] ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վ. Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ, 03.09.2013, https://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/?fbclid=IwAR38U04u53BZX62WOqPcSbrJkzNTAskTdJLJsp2uE_7eaccw-CPMu6kF9VA (դիտումը՝ 12.07.2020 թ.):

[2] Դեռևս 2012 թ. դեկտեմբերին ԱՄՆ պետքարտուղար Հ. Քլինթոնը հայտարարել էր, որ «ԱՄՆ-ն ընդդիմանալու է հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն գործընթացներին, որոնք գնահատվում են որպես Խորհրդային Միության վերականգնման փորձեր»: Տե՛ս Клинтон критикует «ресоветизацию», 07.12.2012, https://rus.azattyq.org/amp/24791977.html?fbclid=IwAR0oIw0o0tJ-BGZRyz3qwBnCeZFBL7XosFRlJut_qeODZwjIkx5g93vHxNI (դիտումը՝ 22.01.2020 թ.):

[3] Տե՛ս Дружиловский С. Б., Аватков В. А., Россия и Турция в новом тысячелетии // Российско-турецкие отношения: 2002-2012 годы, М., 2013, с. 18:

[4] Տե՛ս Օրդյան Ա., «Սեպտեմբերի 3»-ը փոխեց համաձայնագրի անունը, 28.02.2017, https://armeniasputnik.am/analytics/20170227/6545257/armenia-evramiutyun-rusastan.html?fbclid=IwAR2GrrYP-NBLgy91xE12QbIkxfn4Nk1zcT-qkKqv0DDUDb1GcHaopSEa8ZeY (դիտումը՝ 12.07.2020 թ.):

[5] Տե՛ս Հակոբյան Թ., Նիկոլ Փաշինյանը փակում է արժանապատիվ նահանջի ճանապարհները, 22.12.2020, https://www.civilnet.am/news/2020/12/22/Նիկոլ-Փաշինյանը-փակում-է-արժանապատիվ-նահանջի-ճանապարհները/414067 (դիտումը՝ 24.12.2020 թ.):

[6] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴ բաժին, g. 20, գ. 99, թ. 37; ՀՀ ԱԳՆ ՊԴ բաժին, g. 20, գ. 94, թ. 116-117:

քաղաքականությունում, հատկապես Արևմուտքի աճող պատժամիջոցների ազդեցության պայմաններում սկսելու էր առավել կարևորվել՝ հետագայում նոր ռիսկերի առաջ կանգնեցնելով իր գործոնի սրությունը կորցրած հայկական կողմին: Մինչդեռ թուրք-ադրբեջանական հարաբերությունների բազմաշերտ մակարդակը Ադրբեջանին Մոսկվայի առջև իր գործոնն ամրապնդելու հնարավորություն էր տալիս: Թուրքիայի առումով նշենք հետևյալը. վերջինս, էներգետիկ-տնտեսական տեսանկյունից բացի, ուներ նաև աշխարհաքաղաքական նշանակություն ՌԴ-ի համար: Մասնավորապես, ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան իր դաշնակիցների դեմ հաճախակի հայտարարություններով և գործողություններով Ռուսաստանին դրանից օգտվելու առիթ էր ընձեռում, ինչը, թերևս, թուրքական կողմն անում էր Մոսկվային հաճոյանալու և նրա առջև սեփական գործոնի կարևորությունն ի ցույց դնելու նպատակներով: Թեև հայեցակարգային առումով Անկարան սկսել էր վարել առավել անկախական արտաքին քաղաքականություն՝ առանցքում ունենալով իր ռազմավարական ինքնավարությունը[1]: Միաժամանակ Իրանի հետ հնարավոր բախման համատեքստում Արևմուտքի կողմից Թուրքիային տրվում էր առանցքային նշանակություն, ինչով ևս կարևորվում էր վերջինիս գործոնը Մոսկվայի առաջ: Վերոգրյալի համատեքստում պատահական չէր, որ 2015 թ. վերջում կողմերի միջև սկիզբ առած ճգնաժամը երկար չէր տևելու: Այսպիսի մարտահրավերների պայմաններում Մոսկվայի առջև իր գործոնը թուլացրած ՀՀ-ն օբյեկտիվորեն զրկվում էր խուսավարելու հնարավորությունից, մինչդեռ սեփական գործոնի թուլացումը սպառնալիք է ցանկացած, առաջին հերթին՝ Հարավային Կովկասի նման կոնֆլիկտոգեն տարածաշրջանում գտնվող սուբյեկտի համար: Գործոնը կորցրած սուբյեկտն ի վերջո վերածվում է գործիքի՝ իր իսկ շահերի դեմ:

Միջազգային և համահայկական իրադարձություն էր 2015 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նշումը: Այս առիթով ՌԴ-ն Երևանում ներկայացել էր նախագահ Վ. Պուտինի մակարդակով, որտեղ վերջինս նաև գործածեց «ցեղասպանություն» եզրույթը: Մինչդեռ այդ նույն օրը, Դարդանելի ճակատամարտի 100-ամյակի կապակցությամբ Թուրքիայում կազմակերպված միջոցառմանը ռուսական կողմը ներկայացել էր պետդումայի խոսնակ Ս. Նարիշկինի մակարդակով: Այդ առիթով Ա. Մալաշենկոն հայտնել էր, որ Մոսկվան դիվանագիտական ուղիներով խնդրել էր Անկարային Պուտինի այցը չընկալել որպես ագրեսիվ քայլ[2]: Այնուամենայնիվ, ՌԴ ղեկավարի հայաստանյան այցին Թուրքիան բացասաբար արձագանքեց: Ա. Դավութօղլուն հայտարարեց. «Պուտինի և Օլանդի այցը Հայաստան ստվեր է գցում ԵԱՀԿ Մինսկի խմբում Ռուսաստանի և Ֆրանսիայի անաչառության վրա»[3]: Մ. Չավուշօղլուն նշեց, որ ոչինչ չի արդարացնում Ռուսաստանի գործողությունները Ղրիմում, Վրաստանում և Ուկրաինայում: Իսկ այն բանից հետո, երբ Պուտինը հայաստանյան այցի ժամանակ 1915 թ. իրադարձությունները որակեց որպես ցեղասպանություն, էրդողանը հայտարարեց, որ այն, ինչ կատարվում է այժմ Ուկրաինայում և Ղրիմում, ակնհայտ է, նրանք նախ պետք է բացատրեն դա, և հետո միայն գործածեն «ցեղասպանություն» բառը[4]: Նշված իրադարձությունները ևս լարվածություն առաջացրին ռուս-թուրքական հարաբերություններում:

Այսպիսով, 2011 թվականից սիրիական խնդրով պայմանավորված՝ ռուս-թուրքական տարաձայնությունները 2015 թ. նոյեմբերին վերաճեցին առճակատման: Կողմերի միջև լարվածությունը տարածվեց նաև նրանց հարաբերությունները շոշափող մյուս բնագավառների ու տարածաշրջանների վրա: Այս համատեքստում տեղին է հիշատակել արևելագետ Ա. Օրլովի այն տեսակետը, որ Հարավային Կովկասի քաղաքական մթնոլորտը ավանդաբար կախված է Մոսկվայի և Անկարայի միջև հարաբերություններից[5]: Համամիտ ենք այն մոտեցմանը, որ այլևս անհնար է առանձին դիտարկել հայ-ադրբեջանական

---

[1] Տե՛ս Triantaphyllou D., Turkey and the quest for limited autonomy from the West, 01.07.2020, https://www.eastern-focus.eu/2020/07/turkey-and-the-quest-for-limited-autonomy-from-the-west/ (դիտումը՝ 25.05.2021 թ.):

[2] Տե՛ս Дергачев В., В Армении прошли мероприятия, приуроченные к столетию геноцида армян, 24.04.2015, https://m.gazeta.ru/politics/2015/04/24_a_6653949.shtml?fbclid=IwAR0UOeBlZXoZnxT3tU-zah4Xq3tUJd5IkiBTky2PbAMqWFdZxqG0g0u1-ocw (դիտումը՝ 21.01.2020 թ.):

[3] Դավութօղլուն «նեղացել է» Պուտինից և Օլանդից՝ Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներին մասնակցելու համար, 24.04.2015, http://www.panarmenian.net/arm/news/191129/ (դիտումը՝ 20.06.2020 թ.):

[4] Տե՛ս Перемитин Г., Глава МИД Турции осудил действия России на Украине и в Крыму, 13.05.2015, https://www.rbc.ru/politics/13/05/2015/5552a3ba9a7947095d7f0009 (դիտումը՝ 21.01.2020թ.):

[5] Տե՛ս Орлов А. А., Российско-турецкие отношения: трудное движение вперед // Российско-турецкие отношения: 2002-2012 годы, М., 2013, с. 9:

կոնֆլիկտը, քանի որ այն դառնում է ընդհանուր անկայունության մաս[1]: Այս համատեքստում թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը նշում է, որ 2016 թ. ապրիլին Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները Մոսկվայի և Անկարայի միջև Սիրիայում առճակատման հետևանք էին[2]: Թուրքիայի կողմից նախապատրաստվող սադրանքը շանտաժ էր Ռուսաստանին նրա հակաթուրքական դիրքորոշման համար: Սակայն Թուրքիայի կողմից Բաքվի հրահրումը հաջողվեց նաև ռուս-ադրբեջանական ռազմավարական գործընկերության շնորհիվ, որի արդյունքում ադրբեջանական զինուժն ունեցել էր աննախադեպ վերելք[3]: Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենք վաճառելը ինտրիգ էր սերմանել ղարաբաղյան խնդրի շուրջ:

Թուրքիան, իր և ՆԱՏՕ-ի շահերից ելնելով, շահագրգռված էր տարածաշրջանի ապակայունացման մեջ, որը լրացուցիչ խնդիր կդառնար Մոսկվայի համար: Ռուս թուրքագետ Վ. Ավատկովը նշել է, որ ղարաբաղյան կոնֆլիկտում Անկարան Բաքվին դրդում է պատերազմի: Թուրքիան բազմիցս հայտարարել է, որ տարածաշրջանային ցանկացած զարգացումների դեպքում կլինի Ադրբեջանի կողքին: Տարածաշրջանի ապակայունացումը Թուրքիայի համար հնարավորություն է: Դա կհանգեցնի թյուրքական աշխարհում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, որը նրա խնդիրներից մեկն է[4]:

2016 թ. ղարաբաղյան հակամարտության կարճատև թեժացումը որոշ առումներով կարող էր ձեռնտու լինել Մոսկվային, քանի որ դա նրան միջնորդական առաքելություն ստանձնելու հնարավորություն տվեց: Այն նաև որոշակիորեն շեղեց միջազգային ուշադրությունը սիրիական և ուկրաինական ճգնաժամերից: Իրադարձությունները ցույց տվեցին, որ 2016 թ. ապրիլյան հրադադարը հաստատվեց Ռուսաստանի միջնորդությամբ, ինչը կրկին փաստեց, որ Մոսկվան կառավարում է հակամարտությունը: Այն, ըստ էության, խաղաքարտ է Թուրքիայի և Ռուսաստանի տարածաշրջանային շփումներում: Հատկանշական է նաև, որ դրսևորվեց խնդրի նկատմամբ թուրքական և ռուսական կողմերի ազդեցության չափը: Թուրքիան սանձազերծեց բախումը, իսկ Ռուսաստանը դրան վերջ դրեց: Դրսևորվեց նաև հակամարտող կողմերի հետ Մոսկվայի հարաբերությունների առավելությունը, ինչից զուրկ էր Թուրքիան: Վերջինս, ի տարբերություն Ռուսաստանի, կարող էր ազդել միայն Բաքվի վրա:

Փաստերն ու իրադարձությունները վկայում էին, որ ղարաբաղյան խնդիրը բացառապես տարածաշրջանային չէ և ունի համաթյուրքական և պանթյուրքական նշանակություն, որի միջոցով շահագրգիռ ուժերը կփորձեն հյուծել հայկական պետության տնտեսական, հասարակական-քաղաքական և ռազմական ներուժը, ինչը հակասում է նաև Մոսկվայի շահերին:

2020 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ում Ռ. Էրդողանը ՀՀ-ին մեղադրեց Հարավային Կովկասում խաղաղության և կայունության հիմնական խոչընդոտ լինելու մեջ: Բացի դրանից՝ նա հերթական անգամ ընդգծեց, որ Թուրքիան հանդես է գալիս տարածաշրջանի հակամարտությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի տարածքային ամբողջականության լուծման դիրքերից[5]: Ի դեպ, 2020 թ. հուլիսյան թեժացման ժամանակ պաշտոնական Անկարան հանդես եկավ Հայաստանին ուղղված կոշտ ու ագրեսիվ հռետորաբանությամբ[6]: Էրդողանի ելույթից հետո՝ սեպտեմբերի 27-ին, Թուրքիայի միջամտությամբ և աջակցությամբ, այդ թվում՝ թուրք ազգայնամոլների և Մերձավոր Արևելքից վարձկան-

---

[1] Տե՛ս Гостев А., Встать с колен, сбив с ног соседа. Большая игра Путина и Эрдогана, 07.08.2020, https://www.svoboda.org/a/30770234.html?fbclid=IwAR0gdh_ScSS31f0XAc3BVALwDZ-C9SdWywvTVqS1dJhXbMtS6v9Vew9Yzx4 (դիտումը՝ 17.08.2020 թ.):

[2] Տե՛ս Сафрастян Р. А., Турция «предупредительно выстрелила» руками Баку в сторону Армении и России, 09.03.2020, https://eadaily.com/ru/news/2020/03/09/turciya-predupreditelno-vystrelila-rukami-baku-v-storonu-armenii-i-rossii (դիտումը՝ 24.08.2020 թ.):

[3] Տե՛ս Азанов Р., Какое оружие Азербайджан покупал у России, 25.09.2018, https://tass.ru/armiya-i-opk/5598195 (դիտումը՝ 26.05.2021թ.), նաև՝ ՀՀ ԱԳՆ ՊԴ բաժին, g. 20, գ. 99, թ. 103:

[4] Տե՛ս Аватков В. А., Турция подталкивает Азербайджан к войне с Арменией – российский востоковед, 22.07.2020, https://eadaily.com/ru/news/2020/07/22/turciya-podtalkivaet-azerbaydzhan-k-voyne-s-armeniey-rossiyskiy-vostokoved?fbclid=IwAR3UuyilG3J7CWBrkJzTgoGqIw92k779mEca28u2xVwqSgr8EYDzhTN5OwY (դիտումը՝ 17.08.2020թ.):

[5] Տե՛ս Չոբանյան Է., Էրդողանը ՄԱԿ-ում բողոքել է Հայաստանից՝ Հարավային Կովկասում խաղաղության խոչընդոտ որակելով, 23.09.2020, https://factor.am/285947.html (դիտումը՝ 23.09.2020 թ.):

[6] Տե՛ս Akar'dan Azerbaycan'a destek, Ermenistan'a sert uyarı: Ne gerekirse yaparız, 17.07.2020, https://www.hurriyet.com.tr/dunya/akardan-azerbaycana-destek-ermenistana-sert-uyari-ne-gerekirse-yapariz-41566438 (դիտումը՝ 25.05.2021 թ.):

ահաբեկիչների ներգրավմամբ Բաքուն հերթական ագրեսիան ձեռնարկեց Արցախի դեմ[1]: Այս իրադարձություններում Թուրքիայի ներգրավվածությունը ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանն իրավացիորեն կապել է նրա պանթյուրքական նկրտումների հետ[2]: Սկիզբ առած գործընթացներում Թուրքիան, ի հաշիվ Մոսկվայի դիրքերի, փորձեց ամրանալ Հարավային Կովկասում, ինչպես նաև ղարաբաղյան խնդրով պայմանավորված բանակցություններում, որտեղ Ադրբեջանը, ըստ էության, դարձավ նրա ծավալապաշտության գործիքը: Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների նոյեմբերի 9-ի համատեղ հայտարարությամբ [3] ռազմական գործողություններին վերջ դրվեց, որով նաև նախատեսվեց Արցախի՝ հայերի կողմից վերահսկվող տարածքում ռուս խաղաղապահների տեղակայումը *(2021 թ. հունվարից Աղդամում գործել սկսեց ռուս-թուրքական մշտադիտարկման կենտրոնը)*: Հատկանշական է, որ հիշյալ եռակողմ հայտարարությամբ կրակի դադարեցման ու ՌԴ խաղաղապահ ուժերի տեղակայման մասին որոշումներն ընդունվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափից դուրս, ինչն առաջ բերեց ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դժգոհությունը: Իսկ պատերազմի արդյունքներով Մոսկվան ընդլայնեց իր ազդեցությունը Հարավային Կովկասում՝ նաև ընդլայնելով իր ռազմական ներկայությունը: Նշենք նաև, որ պատերազմի ընթացքում գործնականում դրսևորվեց Անկարա-Թբիլիսի-Բաքու ռազմավարական համագործակցությունը:

Անկարան իր հակառուսական դիրքորոշումն ընդգծեց նաև Կիևի հետ հարաբերություններում. 2020 թ. հոկտեմբերի 16-ին նախագահ Վ. Զելենսկու հետ հանդիպմանը Ռ. Էրդողանը հերթական անգամ նշեց. «Թուրքիան սատարում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը և չի ճանաչում Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցումը»[4]: Ի դեպ, Ղրիմը, որպես պանթյուրքիզմի ծագման բնօրրան[5], գաղափարական մեծ նշանակություն ունի Թուրքիայի ծավալապաշտական նկրտումներում: Իրադարձությունները վկայում են, որ արևելքում և հետխորհրդային տարածքում Անկարան որդեգրել է նախաձեռնող քաղաքականություն, որտեղ նրա պանթյուրքական նախագծերը սպառնալիք են ոչ միայն տարածաշրջանի, այլև Ռուսաստանի և Իրանի համար:

Ռուսաստանում ավտորիտար-ուժային և լիբերալ բևեռների միջև պայքարը պատմականորեն ուղեկցվել է տարատեսակ ցնցումներով, իսկ մեր օրերում դրանք կարող են որոշակի հնարավորություններ բացել Թուրքիայի առաջ: Ռազմաքաղաքական գերինքնավստահությամբ պայմանավորված վերջինիս աշխարհաքաղաքական հավակնությունները, տարածաշրջանում սեփական շահերի առաջմղումը և ռազմաքաղաքական ազդեցության մեծացումը երկարաժամկետ անվտանգային սպառնալիքներ են ստեղծում Հայաստանի համար: Թուրքիայի իսլամական ազգայնականության և ագրեսիվ ծավալապաշտական քաղաքականությունն ու վարքագիծը տարածաշրջանում ստատուս քվոյի կտրուկ փոփոխության հնարավորություն տվեցին Ադրբեջանին: Ռուսաստանի համար երկարաժամկետ առումով էական խնդիր է դառնալու նաև Հարավային Կովկասում թուրք-ադրբեջանական ռազմական դաշինքի զսպումը, որի աշխարհաքաղաքական ազդեցությունը նաև Կենտրոնական Ասիա տարածվելու նոր հնարավորություններ է բացում: Ակնհայտ է նաև այն, որ ռուս-թուրքական հարաբերությունների միաժամանակ և՛ հակամարտային, և՛ համագործակցային երկարաժամկետ բնույթն (ինչին վերջին տարիներին ականատես ենք լինում Սիրիայում) իր ազդեցությունը կունենա ինչպես տարածաշրջանի, այնպես էլ՝ Հայաստանի կենսական անվտանգության վրա: Դրան հատկապես կարող են նպաստել Ռուսաստանի տնտեսական դրության հետագա հնարավոր վատթարացումը, Արևմուտքի պատժամիջոցներն ու վերջինիս կողմից նրան մեկուսացնելու քաղաքականությունը, Թուրքիա-Արևմուտք լարվածությունը և այլն:

---

[1] Տե՛ս Михайлов В., Третья Карабахская: некоторые предварительные итоги с надеждой на мир, 10.10.2020, https://eadaily.com/ru/news/2020/10/10/tretya-karabahskaya-nekotorye-predvaritelnye-itogi-s-nadezhdoy-na-mir (դիտումը՝ 13.10.2020 թ.):

[2] Տե՛ս Պողոսյան Հ., Հիմա մենք ականատեսն ենք Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության նոր փուլին…, 12.10.2020, https://newsmedia.am/?p=2540685&l=am%2F&fbclid=IwAR35I8VV-qw2k21-DtNf9aNze6lDauyHHRPxwEk4pfYoz8Utk5csXjkKs3g (դիտումը՝ 13.10.2020 թ.):

[3] Տե՛ս Заявление Президента АР, Премьер-министра РА и Президента РФ, 10.11.2020, http://kremlin.ru/events/president/news/64384 (դիտումը՝ 17.11.2020 թ.):

[4] Turkish, Ukrainan cooperation deepens: Erdoğan, 17.10.2020, https://www.hurriyetdailynews.com/turkish-ukrainian-cooperation-deepens-erdogan-159215 (դիտումը՝ 17.10.2020 թ.).

[5] Պանթյուրքական գաղափարախոսության հիմնադիրն է Ղրիմի թաթար Իսմայիլ Գասպրինսկին (1851-1914 թթ.):

Тарон Сакоян, ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016). Целью статьи является анализ интересов и противоречий России и Турции на Южном Кавказе, которые, во многом, обострились под влиянием сирийского и украинского кризисов. В этих условиях Азербайджан стал ключевым инструментом для Анкары, что позволило последней приступить к постепенному продвижению своих интересов в регионе. Тем временем, образование ЕАЭС с участием Армении (без каких-либо предварительных условий с ее стороны), отрицательно отразилось на ее факторе, в первую очередь, в отношениях с союзной Москвой. А на фоне политических и экономических санкций Запада против Москвы, Турция и Азербайджан, в противовес интересам Армении, значительно усилили свои геополитические факторы в отношениях с Россией.

Ключевые слова: Россия, Турция, Южный Кавказ, баланс сил, сирийский кризис, украинский кризис, ЕАЭС, фактор, Армения, Азербайджан, карабахский конфликт.

Taron Sakoyan, INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016). The purpose of the article is to analyze the interests and contradictions between Russia and Turkey in the South Caucasus, which have been aggravated in many aspects by the influence of the Syrian and Ukrainian crises. In these circumstances, Azerbaijan became a key player for Ankara, which allowed the latter to gradually move on its interests in the region. Meanwhile, the formation of the EAEU with the participation of Armenia (without any preconditions on its end) negatively affected the latter's factor, first of all, for Moscow as an ally. On top of it, Turkey and Azerbaijan, contrary to the interests of Armenia, significantly strengthened their geopolitical factors before Russia, against the backdrop of West's political and economic sanctions against Moscow.

Key words: Russia, Turkey, the South Caucasus, balance of power, Syrian crisis, Ukrainian crisis, EAEU, factor, Armenia, Azerbaijan, Karabakh conflict.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300